ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» հուլիսի 2023թ. № 625

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ԹԻՎ 596 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 14-ի «Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0490-0092 կադաստրային ծածկագրով բնակելի շենքի հասցեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին համապատասխանեցնելու մասին» թիվ 596 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հուլիսի 27
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«28» հուլիսի 2023թ. № 626

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՈՒԹԵՐՈՐԴ ԽԱՂԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՇԻԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, Համահայկական ամառային ութերորդ խաղերի պատվիրակության անդամների և մարզիկների համար մարզահագուստ և սպորտային կոշիկներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Գրասենյակային նյութեր և հագուստ» 4261 տնտեսագիտական հոդվածից հատկացնել 1 984 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հուլիսի 28
ք.Սպիտակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com


# ՈՐՈՇՈՒՄ

«31» հուլիսի 2023թ. № 627

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 31-ի թիվ 9 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 285 000 (երկու հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հուլիսի 31
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«31» հուլիսի 2023թ. № 628

# ԳՆԵԼ ԱՂՎԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ԷԴՎԱՐԴ ԳՆԵԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ՍԻՐԱՄԱՐԳ ԳԱԳԻԿԻ ԱԹՈՅԱՆԻՆ, ԳՆԵԼ ԷԴՎԱՐԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ԼՈՒՍԻՆԵ ԷԴՎԱՐԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ԻՆԵՍԻԱ ԳՆԵԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ԻՐԻՆԱ ԳՆԵԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՐԹԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ, հիմք ընդունելով թիվ ՎԴ6/0240/05/20 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2023 թվականի մայիսի 15-ի վճիռը՝ ***որոշում եմ.***

1.Գնել Աղվանի Մանուկյանին, Էդվարդ Գնելի Մանուկյանին, Սիրամարգ Գագիկի Աթոյանին, Գնել Էդվարդի Մանուկյանին, Լուսինե Էդվարդի Մանուկյանին, Ինեսիա Գնելի Մանուկյանին, Իրինա Գնելի Մանուկյանին ընդգրկել Հայստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրի աղետի հետևանքով անօթևան անձանց հերթացուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ հուլիսի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«31» հուլիսի 2023թ. № 629

# ՆԱԻՐԻ ՆՈՐԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ ՑՈՂԻԿ ԵՂԻՇԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՐԹԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշմամբ, հիմք ընդունելով թիվ ՎԴ6/0164/05/21 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2023 թվականի մայիսի 15-ի վճիռը՝ ***որոշում եմ.***

1.Նաիրի Նորիկի Մկրտչյանին և Ցողիկ Եղիշի Մկրտչյանին ընդգրկել Հայստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրի աղետի հետևանքով անօթևան անձանց հերթացուցակում:

բնակավայրի աղետի հետևանքով անօթևան անձանց հերթացուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ հուլիսի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«31» հուլիսի 2023թ. № 630

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳԱՐԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-030-0018-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,28 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ, ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ԹԻՎ 495 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1590796 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06030PYKCQBN) և Ռուբիկ Վաղարշակի Գևորգյանի (ծնված՝ 01.07.1947թ) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող 06-030-0018-0008 կադաստրային ծածկագրով, 0,28 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 216,0 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 72,0 քառակուսի մետր անասնագոմին տրամադրել «Սպիտակ, գյուղ Գոգարան, 8-րդ փողոց, 15 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1809):
2. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 22-ի «Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող 06-030-0018-0004 կադաստրային ծածկագրով 0,28 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին հասցե տրամադրելու մասին» թիվ 495 որոշումը:
3. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հուլիսի 31
ք. Սպիտակ